ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- մայիսի 2025 թվականի №-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի №397-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը, այդ թվում՝ կարգի 46-րդ կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության, «ԷՖԱրՎի Մասրիկ» փակ բաժնետիրական ընկերության և «Ֆոտովատիո Ռենյուաբլ Վենչրս» Էս. Էլ.-«Էֆէսէլ Սոլար» Էս. Էլ.-ի միջև 2020 թվականի հունիսի 26-ին կնքված Հայաստանում՝ Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկի համայնքում «Մասրիկ-1» արևային ֆոտովոլտային (ՖՎ) էլեկտրակայանի նախագծման, ֆինանսավորման, կառուցման, սեփականության իրավունքով տիրապետման և շահագործման մասին փոփոխված և վերաշարադրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության աջակցության համաձայնագիրը, և հաշվի առնելով «ԷՖԱրՎի Մասրիկ» փակ բաժնետիրական ընկերության 2025 թվականի ապրիլի 30-ի և մայիսի 2-ի գրությունները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2018 թվականի հոկտեմբերի 24-ի «ԷՖԱրՎի Մասրիկ» փակ բաժնետիրական ընկերությանը «Մասրիկ-1» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №397-Ա որոշման՝

1) 1-ին կետում «մինչև 2025 թվականի հունիսի 1-ը» թվերը և բառերը փոխարինել «մինչև 2025 թվականի մայիսի 15-ը» թվերով և բառերով, «մինչև 2043 թվականի մարտի 18-ը» թվերը և բառերը՝ «մինչև 2045 թվականի մայիսի 15-ը» թվերով և բառերով,
2) 1-ին կետում «Մեծ Մասրիկ համայնքի վարչական տարածք» բառերը փոխարինել «Վարդենիս համայնքի վարչական տարածք (գյուղ Մեծ Մասրիկ)» բառերով, իսկ 2-րդ կետով հաստատված հավելվածի 5-րդ կետում «Մեծ Մասրիկի վարչական տարածքն է» բառերը փոխարինել «Վարդենիս համայնքի վարչական տարածքն է (գյուղ Մեծ Մասրիկ)» բառերով:
3) 2-րդ կետով հաստատված հավելվածի 12-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

   «12. Կայանի փաստացի տեղակայված (դրվածքային) հզորությունը 55 ՄՎտ է:»:

2. «Բիբլոս Բանկ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությանն ամբողջությամբ ազատել 2018 թվականի սեպտեմբերի 17-ի №1214 գրությամբ Հանձնաժողով ներկայացված, 2020 թվականի նոյեմբերի 30-ի №1549, 2022 թվականի հունիսի 30-ի №826, 2023 թվականի սեպտեմբերի 29-ի, 2024 թվականի օգոստոսի 15-ի №1337, 2024 թվականի դեկտեմբերի 18-ի №2383 և 2025 թվականի մարտի 18-ի №775 գրություններով գործողության ժամկետը երկարաձգված ԲԲԱ05/2018 երաշխիքի համաձայն Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի առջև ստանձնած երաշխիքային պարտավորությունից:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի մայիսի 15-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ**

ք. Երևան
-- մայիսի 2025թ.